# ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԲՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՈՐՈՇՈՒՄ

**N - Ն**

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԲՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նյութական պահուստի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Սահմանել պետական պահուստի նյութական արժեքների պահպանման ընթացքում առաջացող բնական կորուստների հաշվարկման կարգը և նորմատիվները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված

ՀՀ կառավարության 2020 թվականի

_______________ ____ №____-Ն որոշման

**ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ**

**ԲՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ և ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻ**

1. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույնով սահմանվում է պետական պահուստի նյութական արժեքների՝ նավթամթերքի և հացահատիկի պահպանման ժամանակ առաջացող բնական կորուստների չափերը (բնական կորուստը պահպանման ժամանակ):
2. Բնական կորուստները նավթամթերքի (վառելիքի) և հացահատիկի զանգվածի բնականոն նվազումն է որակի պահպանմամբ, ինչը ֆիզիկաքիմիական, մեխանիկական, բնակլիմայական գործոնների ազդեցության հետևանք է:
3. Բնական կորուստներին չեն վերաբերում նավթամթերքի և հացահատիկի այն պակասորդներին, որոնք առաջացել են տնտեսավարող սուբյեկտի կողմից սահմանված պահանջների և տեխնիկական շահագործման կանոնների խախտման կամ բնական աղետների հետևանքներով:
4. Բնական կորուստներ չեն այն կորուստները, որոնք առաջացել են տարողությունների և խողովակաշարերի մաքրման և վերանորոգման ցանկացած տեսակի աշխատանքների հետևանքով, վթարային կորուստները, ինչպես նաև կորուստները գողոնից, բնական աղետներից և ներպահեստային մղումներից:
5. Բնական կորուստների հաշվարկն իրականացվում է սույն հավելվածով սահմանված չափերին համապատասխան՝ դրանք համադրելով նավթամթերքի և հացահատիկի փաստացի մնացորդային զանգվածի հետ:
6. Այն դեպքում, երբ փաստացի մնացորդային զանգվածն ավելի մեծ է, քան սույն հավելվածով սահմանված բնական կորստի չափերով հաշվարկված զանգվածը հիմք է ընդունվում փաստացի մնացորդային զանգվածը:
7. Այն դեպքում, երբ փաստացի մնացորդային զանգվածն ավելի փոքր է, քան սույն հավելվածով սահմանված բնական կորստի չափերով հաշվարկված զանգվածը, հիմք է ընդունվում սույն հավելվածով սահմանված բնական կորստի չափերով հաշվարկված զանգվածը:

1. **Նավթամթերքի տարողություններում պահպանման ընթացքում**

**բնական կորուստների չափերը.**

8. Նավթամթերքի փաստացի (բնական) կորուստների նորմերը ներկայացված են ըստ սեզոնայնության, տարվա երկու ժամանակահատվածի համար' աշուն-ձմեռ (հոկտեմբերի 1-ից մարտի 31-ը) և գարուն-ամառ (ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ը):
9. Այն դեպքերում, երբ նավթամթերքը պետք է տաքացվի, ապա անկախ տարվա եղանակից և սեզոնից կիրառվում է գարուն-ամառ սեզոնի նորմը, որը բազմապատկվում է կախված տաքացման ջերմաստիճանից'

1) 21-30 °C ջերմաստիճանի դեպքում' 1,5 գործակցով

2) 31-50°C ջերմաստիճանի դեպքում' 2 գործակցով

3) 51°Շ-ից ավելի ջերմաստիճանի դեպքում' 3 գործակցով

4) 11-20 °C ջերմաստիճանի տաքացման դեպքում աշնան-ձմռան սեզոնի համապատասխան նորմը աշնան-ձմռան սեզոնում բազմապատկվում է 1.5 գործակցով:

10. Նավթամթերքի ըստ տեսակների դասերը ներկայացված են սույն հավելվածի N 1 աղյուսակով:
11. Նավթամթերքի բնական կորստի չափը տարողություններում ընդունման (բեռնաբարձման) դեպքում ներկայացված է N 2 աղյուսակում:
12. Ստորգետնյա տարողություններ են համարվում այն երկաթբետոնե և պողպատե տարողությունները, որոնք գետնի մակերևույթից 0.2 մ խորությամբ են ծածկված:
13. Բնական կորստի չափը մազութի համար` բաց հորային ամբարներում պահպանման, ընդունման (բեռնաբարձման) և դատարկման (բեռնաթափման) դեպքում կգ-ներով 1 տոննա մազութի համար կազմում է 2.36 կգ:

**Աղյուսակ N 1.**

| **Նավթամթերքի դաս** | **Նավթամթերքի տեսակները** |
|---|---|
| **1** | Ավտոմոբիլային բենզիններ բոլոր տեսակների. |

Ուղղակի թորված բենզին.

Գազի կայուն կոնդենսատ.

Բենզին գազային կայուն (գազային կոնդենսատից).

**2** Նավթային լուծիչներ բոլոր տեսակների՝ $+50^{0}$ C-ից մինչև $+100^{0}$ C
ջերմաստիճանով

Ավիացիոն բենզիններ բոլոր տեսակների

Տեխնիկական իզոօկտան

Նորմալ հեպտան

Նավթային բենզոլ

Օգտագործված նավթամթերքներ CHO մակնիշի

Ռեակտիվ շարժիչների վառելիք T-2

**3** Նավթային լուծիչներ բոլոր տեսակների $+100^{0}$ C-ից բարձր եռման

Ռեակտիվ շարժիչների վառելիք $+100^{0}$ C-ից մինչև $+150^{0}$ C եռման
բացառությամբ T-2

Նավթային սոլվենտ

Տեխնիկական կերոսին

Լիգրոյին

Նավթային քսիլոլ

Նավթային տոլուոլ

Էթիլբենզոլ տեխնիկական

**4** Կեռոսին լուսավորման համար բոլոր տեսակների

Դիզելային և նավային վառելիքներ մինուս $10^{0}$ C-ից ցածր պղտոր
կամ զտման սահմանային ջերմաստիճանով

Ռեակտիվ շարժիչներ վառելիք, $+150^{0}$ C-ից բարձր եռման ջերմաս

Իզոպռոպիլբենզոլ տեխնիկական

**5** Դիզելային և նավային վառելիքներ մինուս $10^{0}$ C-ից բարձր պղտո
կամ զտման սահմանային ջերմաստիճանով

Վառարանային վառելիք կենցաղային

Միջին և ցածր պտույտով դիզելային շարժիչային վառելիք

**6** Բոլոր տեսակի մազութներ

Քսայուղեր բոլոր տեսակի

Այլ հեղուկ նավթամթերքներ, որոնք պահանջում են տաքացում

Օգտագործված նավթամթերքներ բացառությամբ CHO մակնիշի

**Աղյուսակ N 2**

(կգ-ներով՝ 1 տոննա նավթամթերքի ընդունման (բեռնաբարձման) դեպքում)

| Տարողության տեսակը | Նավթամթերքի դասը | Նավթամթերքի բնական կորստի չա | |
|---|---|---|---|
| | | աշուն-ձմեռ | գարուն-ա |
| Վերգետնյա մետաղական | 1,2 | 0.21 | 0.41 |
| | 3,4 | 0.045 | 0.055 |
| | 5 | 0.02 | 0.02 |
| Վերգետնյա մետաղական ներքին պոնտոններով | 1,2 | 0.06 | 0.13 |
| Ստորգետնյա | 1,2 | 0.14 | 0.30 |
| | 3,4 | 0.035 | 0.045 |
| | 5 | 0.01 | 0.01 |

14. Նավթամթերքի տարողություններում պահպանման դեպքում բնական կորստի չափը հաշվարկվում է փաստաթղթերով ձևակերպված պահուստավորման ընդունված ու տարողություններում պահվող նավթամթերքի միջին ամսական փաստացի զանգվածը բազմապատկելով Աղյուսակ N 3-ում և Աղյուսակ N 4-ում ներկայացված կորստի չափերով:
15. Պահվող նավթամթերքի միջին ամսական փաստացի զանգվածը հաշվարկվում է որպես ամսվա ընթացքում յուրաքանչյուր օրացուցային օրվա ավարտին տարողություններում պահվող նավթամթերքի զանգվածների միջին թվաբանական մեծություն:
16. Կորստի նորմերը սահմանվում են ելնելով նավթամթերքի դասից, հաշվի առնելով նաև բեռնաբարձման և բեռնաթափման հետևանքով նավթամթերքի բնական կորուստների առաջացումը:
17. Առաջին և երկրորդ խմբի նավթամթերքի բնական կորստի չափը տարողություններում պահպանման **յուրաքանչյուր** ամսվա ընթացքում ներկայացվում է Աղյուսակ N 3-ով:

**Աղյուսակ N 3**

**(կգ-ներով 1 տոննա պահպանվող նավթամթերքի քանակի համար, ամսական կտրվածքով)**

| Տարողութ յան տեսակ | Նավ թա մթերքի դաս | Տարողությունների ծավալը ըստ մետր խորանարդ | | Կորստի չափը | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Մինչև 400 ($մ^3$) | | 400-ից մինչև 700 ($մ^3$) | | 700-ից մինչև 1000 ($մ^3$) | | 1000-ից մինչև 2000 ( | |
| | | ա շու ն-ծմեռ | Գա րո ւն-ամառ | -ծմեռ | Գա րո ւն-ամառ | ա շու ն-ծմեռ | Գա րո ւն-ամառ | աշ ուն-ծմեռ | Գա րու ն-ա |
| **Վերգետնյա մետաղական** | 1 | 0,4 | 1,2 | 0,37 | 1,15 | 0,33 | 1,1 | 0,24 | 0,80 |
| **Վերգետնյա մետաղական ներքին պոնտոն ներով** | 1 | 0,08 | 0,3 | 0,07 | 0,28 | 0,06 | 0,27 | 0,055 | 0,2 |
| **Վերգետնյա մետաղական** | 2 | 0,37 | 1,04 | 0,33 | 0,95 | 0,29 | 0,87 | 0,22 | 0,68 |
| **Վերգե նյա մետաղական ներքին պոնտոններով** | 2 | 0,07 | 0,24 | 0,06 | 0,22 | 0,05 | 0,21 | 0,05 | 0,16 |
| **Ստորգետնյա** | 1 | 0,15 | | | | | | | |
| **Ստորգետնյա** | 2 | 0,05 | | | | | | | |

18. 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ դասերի նավթամթերքի բնական կորստի չափը տարողություններում պահպանման **յուրաքանչյուր** ամսվա ընթացքում ներկայացվում է Աղյուսակ N 4-ով:

**Աղյուսակ N 4**

**(կգ-ներով 1 տոննա պահպանվող նավթամթերքի քանակի համար, ամսական կտրվածքով)**

| Տարողության տեսակ | Կորստի չափը | | |
|---|---|---|---|
| | **3** | **4** | **5** |
| **Վերգետնյա մետաղական** | 0,13 | 0,09 | 0,04 |
| **Ստորգետնյա** | 0,07 | 0,06 | 0,02 |

- **ՀԱՑԱՀԱՏԻԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ԲՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ)**

19. Հացահատիկի, հացամթերքների և խոտաբույսերի սերմերի պահպանման ժամանակ առաջացող բնական կորուստների չափերը ներկայացվում են Աղյուսակ N 5-ով:
20. Բնական կորստի նշված նորմերը կիրառվում են որպես հսկիչ և սահմանային նորմեր այն դեպքերում, երբ հացահատիկի, դրա վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների, յուղատու մշակաբույսերի, խոտաբույսերի և խոտաբույսերի, արհեստականորեն չորացրած, ձեռնարկություններում պահվող կերերի փաստացի առկայության գույքագրման կամ ստուգման ժամանակ կսահմանվի դրանց քաշի նվազեցում, որը չի առաջանա որակի փոփոխությամբ:
21. Մինչև երեք ամիս հացահատիկի և այլ յուղատու մշակաբույսերի սերմերի պահպանման դեպքում բնական կորստի նորմերը կիրառվում են պահպանման օրերի փաստացի քանակի հաշվարկով, իսկ մինչև վեց ամիս և մինչև մեկ տարի պահելու դեպքում' պահպանման ամիսների փաստացի թվի հաշվարկով:
22. Մեկ տարուց ավելի հացահատիկային, դրա վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների և յուղատու մշակաբույսերի սերմերի պահպանման ժամանակ բնական կորստի նորման պահպանելու յուրաքանչյուր հաջորդ տարվա համար կիրառվում է 0,04% - ի չափով վերահաշվարկ` ելնելով պահպանման ամիսների փաստացի թվից:
23. Հացահատիկի կորուստի նորմը սահմանվում է խառնուրդի մեջ պարունակվող հիմնական մշակույթով:
24. Արտադրանքի պահպանման ժամանակ բնական կորստի նշված նորմերը չեն տարածվում ցորենի, լոբազգիների, յուղատու մշակաբույսերի և եգիպտացորենի ալյուրի, ձավարեղենի և սերմերի վրա, որոնք ընդունվում և բաց են թողնվում պարկերի ստանդարտ կշռով:
25. Էլեկտրամագնիսական մեքենաներով մաքրման ենթարկված խոտաբույսերի սերմերի բնական նվազման նորմերն ավելանում են 15 տոկոսով:

Աղյուսակ N 5

(տոկոսներով քանակության նկատմամբ)

| **Անվանումը** | **Պահման ժամկետը (ամիս)** | **Պահեստում Լցված** | **Տարայավոր ված** | **Էլևատ** |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 3 | 0,075 | 0,045 | 0,048 |
| | 6 | 0,099 | 0,069 | 0,060 |
| Ցորեն, գարի, հաճար, տարեկան | 12 | 0.129 | 0,105 | 0.108 |
| Վարսակ | 3 | 0,099 | 0,057 | 0.06 |
| | 6 | 0,141 | 0,081 | 0,072 |
| | 12 | 0,189 | 0,105 | 0,120 |
| Եգիպտացորենի հատիկ | 3 | 0,147 | 0,093 | — |
| | 6 | 0,189 | 0,117 | — |
| | 12 | 0,243 | 0,153 | — |
| Եգիպտացորենի կողրեր | 3 | 0,291 | — | — |
| | 6 | 0,351 | — | — |
| | 12 | 0,531 | — | — |
| Բրինձ-հացահատիկ | 3 | 0.087 | 0,057 | 0.060 |
| | 6 | 0,117 | 0,081 | 0,085 |
| | 12 | 0,126 | 0,165 | 0,126 |
| Հնդկացորեն | 3 | 0,087 | 0,057 | — |
| | 6 | 0,123 | 0,081 | — |
| | 12 | 0,165 | 0,117 | — |
| Կորեկ, չումիզա, սորգո | 3 | 0,123 | 0,069 | — |
| | 6 | 0,171 | 0,093 | — |
| | 12 | 0,219 | 0,117 | — |
| Ոլոռ, ոսպ, լոբի, վիկա, | 3 | 0.075 | 0,045 | — |
| սոյա, ունդ | 6 | 0,098 | 0,068 | — |
| | 12 | 0,129 | 0,123 | — |
| Արևածաղկի սերմեր | 3 | 0.231 | 0,141 | — |
| | 6 | 0,291 | 0,177 | — |
| | 12 | 0,351 | 0,237 | — |
| Այլ յուղատու | 3 | 0,120 | 0,096 | — |
| մշակաբույսեր | 6 | 0,156 | 0,132 | — |
| | 12 | 0,204 | 0,168 | — |
| (գետնանուշ, քունջութ, | 6 | | | |
| կտավատ և այլ) | 12 | | | |